

ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼՄԻ ՓԱՌԱՏՕՆ
Փետրուար 20, 21, 22, 2004

Delancey Street Theater
600 Embarcadero, San Francisco, CA
(Brannan եւ Townsend փողոցներուն միջեւ)

Տոմսի գին՝ \$10 իւրաքանչիւր ցուցադրութեան
\$60 Փառասօնի բոլոր ցուցադրութիւններուն

Ձեր տոմսերը կրնաք նախօրօք ապահովել Ticketweb-էն
Հեռ. (866) 468-3399 կամ www.ticketweb.com

Սահմանափակ տոմսեր տրամադրելի ցուցադրութեան օրերուն տեղոյն վրայ

Առաջին անգամ ըլլալով Սան Ֆրանսիսքոյի մէջ կը կազմակերպուի Հայկական Ֆիլմի Փառասօն, որ պիտի ցուցադրուին 30 գեղարուեստական լիամետրաժ եւ կարճամետրաժ ժապաւեններ: Փառասօնը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի օրերուն, Փետրուար 20, 21 եւ 22, 2004, Delancey Street Theater-ի 150 աթոռանոց մտերմիկ սրահին մէջ: Իւրաքանչիւր յայտագրի համար նախատեսուած է 2 ժամ:

Փառասօնի ֆիլմերու ընտրութիւնը կատարուած է 3 մասնագէտներէ բաղկացած նոյն յանձնախումբին կողմէ, որ ընտրած էր նաեւ մեծ յաջողութիւն վայելած Նիւ Եորքի Հայկական Ֆիլմի Ֆետիվալի ժապաւենները: Յանձնախումբի անդամներն են՝ Անահիտ Գասապեան (դասախօս Նիւ Եորքի Fordham համալսարանի), Թէա Ֆարհատեան (բազմակողմանի արուեստագէտ եւ երգահան), Հրայր Էօլմէտեքեան (բեմադրիչ): Փառասօնին պիտի ներկայացուին գեղարուեստական եւ վաւերագրական, երկար եւ կարճամետրաժ, փորձարարական եւ մասնագիտական շարժանկարներ, որոնք պատրաստուած են Հայաստանի, Միջին Արեւելքի, Եւրոպայի եւ Ամերիկեան ցամաքամասի տարբեր երկիրներու մէջ:

Ներկայացուած ֆիլմերուն մէջ ընդգծուած են ժամանակակից մեր հարցերը այլազան մօտեցումներով եւ թարմ շունչով: Հակառակ աշխարհագրական տարբեր վայրերուն եւ աշխատանքային տարբեր մօտեցումներուն՝ ֆիլմերը բացայայտօրէն կը շօշափեն հայուն տարագրութիւնը, կորուստները, կարօտն ու տառապանքը: Ընտրուած գործերէն են՝ Օսքարի թեկնածու Ատոմ Էկոյեանի եւ մրցանակակիր Թինա Պասթաճեանի կարճամետրաժ ֆիլմերը, ինչպէս նաեւ Ռոպերթ Քէշիշեանի տպաւորիչ «Արամ» առաջին լիամետրաժ ֆիլմը: Ուշագրաւ այլ շարժանկարներէն կարելի է յիշել «նոր երաժշտութեան» առասպելական մեներգիչ՝ Քէթի Պերպերեանի նուիրուած "Music Is in the Air I Breathe" (ներկայացուած՝ Other Minds Festival-ի գործակցութեամբ), վաւերագրական "Jews in Armenia" ժապաւենը, որ կը շօշափէ հակադիր ինքնութեան հարցերը, եւ "Hokees" փորձարարական ժապաւենը՝ հայ կնոջ եւ իր թուրք սիրականին մասին:

Golden Thread Productions ֆինանսաւելս կը հովանաւորէ Փառասօնը, որ միասնաբար կը ներկայացնեն Film Arts Foundation-ը եւ San Francisco Cinematheque-ը. Փառասօնին կ'օժանդակեն նաեւ Սան Ֆրանսիսքոյի եւ Շրջակայքի բազմաթիւ հայ անձնատրութիւններ ու կազմակերպութիւններ:

Յուցադրութիւններու Ժամանակացոյց